20. ՋՐԱԽԱՌ ԿԱԹԸ

Վաճառականի մեկը կոարն ընկավ, պարտքնտերերը սուդից «իսպոլնի լիստ» հանեցին ու էկան մարդու էղած չէղածը տոլկ էրին, ծախեցին տարան։

Վաճառականս մնաց դառը դարտակ։ Կնիկը թե.— Մարդ ելի մե դործիմ էղի, օրական մեր հացը խո կաշխատիս։

Էս էլ կնկան թե.— Ախր ձեռս դարտակ, ջերս հեչ վեց գոռշ էլ չունիմ, ինչ գործ էնեմ։

Կնիկը թե.— Օսկիքս ու փերիշաններս պահել եմ, էսոնք ծախե էլի բանմ էրա։

Մարդը մտածեց, մտածեց, դառավ կնկան ըսավ.— Կնիկ, գիտե՞ս ինչ, ես քաղքի մեշ անուն ունեի, խանութս 12—15 պրիկաշնիկ կծառայեին, հիմի քու ճակտիդ օսկի-մարգարիտն ու փերիշանը ի՞նչ պտի բռնե, որ ես ընձի քիչմ հարմար գործ էնեմ, մեկել օր պարտքընտերս ծախած ապրանքեն պարտքերուս 60—70 պրացենտն են ստացե, հիմի որ դործմ սկսեմ, սուդերնի պրիստավը գլխուս կկայնըցնեն ու էն էլ ձեռնես կխլեն։ Գիտե՞ս կնիկ ինչ եմ միտք էրե, էրթանք ուրիշ երկիր՝ մե ղարիր քաղաքմ, ուրտեղ մեղի հեչ մարդ չի ճանչե, էնտեղ ինչ գործ էլ էնելու էղնինք, չեմ քաշվի, ամոթանք չեմ քաշե։

Էսպես խոսք մեկ էրին մարդ ու կնիկ, ճամրու ծախսը դրստեցին, նավ նըստան, անցան ծովի էն կողմը, մե մենձ քաղաքմ տուն

բռնեցին։ Քանիմ օր քաղքի հետ ծանոթանալով, էն մտքին կայնան օր, կնկա զարդերը ծախեն, մե էրկու կով առնին, կաթ ու մածուն ծախելով համ իրանց գլոխը պահեն, համ էլ քիչ-քիչ փող ետ քցեն իրանց ծերության օրերուն։

Ինչպես վճռել էին, էնպես էլ կովերն առան։ Գործերը շատ լավ էր. նատուրալնի, անարատ կաթն ու մածունը շատ խոդ ընկավ, օրևցօր մուշտարին կավելնար։ Մե օրմ էլ էս կնիկը տեսավ օր, կաթ ուզող մուշտարիքը դուքան ու դարտակ ետ կդառնան, կաթը չի օդտե բիտաունին, էքսի օրր կվերցու ու կաթի վրա երեք-չորս կրուժկա ջուր կխառնե։ Էսպես օրէօր ջուրը ավելցնելով էն տեղը կհասնի օր, ջուրն ու կաթը կհավասարվի։ Օրմ էլ մարդը դլխու ընկավ օր, քանի կէրթա՝ օրական կաթի փողը կավելնա ու հա կավելնա։ Կնիկը կրացատրե դաղտնիքը, օր կեսե կես ջուր կխառնե։

Կրսե.— Կնիկ էդ բանը թարկ էրա, թե չէ մուշտարիքդ կխրտընցուս, էլ կաթդ առնող չի էղնի։

Կնիկը չհամոզվավ մարդու խոսքին, էլի իրան ուզածը շարունակեց։ Մարդը ըսավ.— Կնիկ, իսաֆ ունեցի, հեչ օր չէ տես՝ ինչը հարամը մեզի վրա չէկավ իմ առուտուրիս մեջ, բիտտուն մեր էղած չէդուծը ձեռներես գնաց։

Բայց էլի կնիկը շարունակեց իրան էրածը էնել՝ կեսե կես ջուր խառնել կաթի հետ։

Անցավ էսպես երեք, չորս, թե հինգ տարի, էս մարդկանց քեֆը տրրնգ էր, մե լավ գումարմ դրստեցին։

— Էհ, կնիկ,— մե օրմ մարդն ըսավ,— մենք հիմի բավական կտոտանք, լավ կէղնի, որ կովերը, տան վեշչին ծախենք, ծախծըխենք, դառնանք մեր քաղաքը պատվավոր՝ ընձի սազական գործմ սկսեմ, ապրինք։

Էս մարդիկ կովերը, իրանց բիտտուն ավելնորդ բաները ծախեցին, ստացան փարեքը, օր օսկի փող էին, մարդու ղաիշ քյամարի տակ աստառ սարքեցին, էղած օսկիքը կարեցին աստառի մեջ, իրանց համար ճամբու խարջլղը վերուցին, նավ նստան ու ճամպա ընկան իրանց քաղաքը։

Օրմ էր, թե էրկու օր ճամբա էին գնացել, նավի վրա էս մարդը գուգե հարկավորության՝ ոտաց ճամբա էրթա. նես կմտնի, քյամարը կը քանդե մեջքեն ու կկախե քյանիֆի դռնեն։ Մեկ էլ բիրդան, ի՞նչ տեսնի, մեկը դսի թարաֆեն քյամարը թռուց։

Մարդը վեր կթռնի, դուս կվազե, մեկ էլ ի՞նչ, նավի կապիտանի մեյմունը քյամարը առած, փաթթվավ ու բանձրցավ տեյմոր կայմի

սրբղի ծերին նստավ։ Հավարն ընկավ, նավի ծառայողները, պա-
սաժիրներն էկան թար էղան, էհ ի՞նչ կրնան հասնին մեյմունին։ Էս
ղալմաղալին վաճառականի կնիկն էլ էկավ, որ իմացավ գործի եղե-
լությունը, հիմի կճղա, գուլա։

Էդ ժամանակ էլ մեյմունը սրղի գլխուն հանգիստ նստած, գո-
տին՝ քյամարը թաթերու մեջը մեկ կդառնա էսգին մեկ՝ էնդին։ Մեկ
էլ՝ մեյմունը զարմացած, առանց քյամարը ժաժ տալու, կմոտեցու
աչքերուն ու հա՛ կաշե, հա՛ կաշե, դու մի ըսե, պլպլան բան է տեսե.
մեկ էլ րիրդան աստառի ճոթը քիչմ օր ետ քաշեց, մե օսկիմ դուս
էկավ, վերցուց ու քցեց մարդկանց գլխուն։

Էնտից ետև մեյմունը հա քիչ-քիչ քանդեց քյամարի աստառն ու
հա մեկ-մեկ օսկի աստառի տկեն քաշելով սկսեց մե օսկին թապլնել
նավի մեջ, մե օսկին ծովի մեջ։ Էս օր տեսավ վաճառականի կնիկը,
սկսեց մազերը պոչկոտել, գլխուն ծեծել։ Մարդը մոտեցավ ու
ըսավ.— Կնիկ, հեչ մի ծեծկոտվի, գու իմ խոսքին հ՚անկաշ չէրիր,
կաթիդ կեսը ջուր կէնեիր կծախեիր, հիմի էս մեյմունը արդար դա-
տաստան կէնե՝ կաթն ու ջուրը իրարուց կչոկե՝ ջրի փարեն ջրին կու-
տա՝ կաթի փարեն էլ մեզի։